ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/10267/02/24 ք. Երևան
9 Դեկտեմբերի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Արման Օհանյանը ուսումնասիրելով <<ԱԷՄՁԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ) ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Նախարարություն)՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

II

(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

02.12.2024 թվականին <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

02.12.2024 թվականին հա. ԵԴ2/10267/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին, իսկ քաղաքացիական գործը Դատարանի դատավոր Ա.Օհանյանին հանձնվել է (հասանելի է դարձել) 03.12.2024 թվականին:

III

(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

Դատարանը, քննության առնելով ներկայացված հայցադիմումը, գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն, հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների ու 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին, ուստի ենթակա է վարույթ ընդունման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Միևնույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալ հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ պետք է պատասխանող <<Երևան բժշկագիտական կենտրոն>> ՓԲԸ-ից պահանջել նշված ապացույցները, որոնք վերջինս պետք է դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5 և 234.6, 234.9, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ըստ հայցի <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջել <<ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-24-4/4>>

ծածկագրով գնման գործընթացի հետ կապված ՀՀ առողջապահության նախարարության տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրա-պետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույց-ները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:

- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվի-րատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընացակարգով և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 14.01.2025 թվականին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արման Օհանյան

Digitally signed by OHANYAN ARMAN
4014820192
Date: 2024.12.09 14:54:53 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am